ք.Երևան 05.03.2025թ.

«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողով

Վահե Նազարեթյանի կողմից հնարավոր վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում կարգապահական վարույթ հարուցելու համար լսումներ հրավիրելու մասին

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը, մասնակցությամբ հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանի, հանձնաժողովի անդամներ՝ Արմինե Մովսիսյանի, Լուսինե Սարգսյանի և Հարություն Գևորգյանի, քննարկելով Աշոտ Սարուխանյանի /այսուհետ՝ դիմումատու/ Վահե Նազարեթյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և համապատասխան կարգապահական տույժ հարուցելու մասին դիմումը պարզեց՝ դեռ 25.09.2024թ.-ին դիմումատուի կողմից, «ՍԳԿԿ» ԻԿԿ դիտորդ խորհուրդի նախագահ՝ Արսեն Չիտչյանի ամվամբ ներկայացվել է դիմում:Կարգապահական հանձնաժողովի կողմից ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.3 հոդվածի հիմքով հարուցվել է կարգապահական վարույթ, իսկ այնուհետև 11.10.2024թ.-ին կազմվել է համապատասխան արձանագրություն՝ եզրակացություն:Միաժամանակ հարկ է նշել նաև, որ «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի դիտորդ խորհուրդի 06.12.2024թ.-ին կայացված նիստում, որոշում է կայացվել վերը նշված արձանագրությունը՝ եզրակացությունը չքննարկել, վարույթի նյութերը ուղարկել կարգապահական հանձնաժողովին նոր քննության:

Հիմք ընդունելով այն փաստը, որ Վահե Նազարեթյանի կարգապահական վարույթին առընչվող գործը ամբողջությամբ վերադարձվել է, ուստի այդ վարույթի շրջանակներում նոր կարգապահական վարույթ չի հարուցվել, սակայն գործի քննությունը իրականացվել է սկզբից:

Քննությունը իրականցնելու նպատակով 18.02.2025թ.-ի նշանակվել է կարգապահական հանձնաժողովի նիստ, որում քննարկվել է դիմումատուի կողմից ներկայացված դիմումը, որով դիմումատուն նշել է, որ Ազդարար.am կայքում 22/08/24թ. հայտարարություն է հրապարակվել թիվ ՄՆԴ/2388/04/23 սնանկության գործով 16.09.24թ. աճուրդի մասին, որով վաճառքի է հանվել OPEL VECTRA մակնիշի 35 MS 102 համարանիշով մեքենան:Իմ կողմից հայտ է ներկայացվել աճուրդին մասնակցելու համար: Նշված օրը ներկայացել է աճուրդի վայր, կապ է հաստատել կառավարիչ Վահե Նազարեթյանի հետ, սակայն վերջինս հայտնել է, որ տեխնիկական խնդրով պայմանավորված աճուրդը չի կայանա: Փորձել է պարզաբանում ստանալ պատճառների մասին, սակայն կառավարիչը առանց հիմնավորման հայտնել է, որ առաջիկայում կհայտարարվի նոր աճուրդ, որին կարող է դեիմումատուն կրկին մասնակցել:Դիմում է ներկայացրել կառավարչին գրավոր պատասխան ստանալու համար, ի պատասխան հայտնել է, որ աճուրդը չի կայանալու:Հավելե նաև, որ կառավարիչը հեռախոսազանգով իրեն տեղեկացրել է, որ նշված գործով ներկայացվել է ևս մեկ հայտ, սակայն դիմումատուի կարծիքով նման հայտ չի եղել և աճուրդը կայանալու դեպքում դիմումատուն կճանաչվեր աճուրդին հաղթող:Դիմումով հայտնել է, որ տեղեկացված է եղել նաև, որ Ազդարար.am կայքում հրապարակվել է աճուրդի մասին հայտարարություն:Ըստ դիմումատուի, նա կարծում է, որ դիմումում նշված գործողությունները կատարվել են միտումնավոր, որպեսզի հնարավորություն չտրվի նշված գույքը ձեռք բերել:Հաշվի առնելով այդ հանգամանքը դիմումատուն խնդրել է Վահե Նազարեթյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Միաժամանակ հարկ է նշել նաև, որ կառավարիչի կողմից կարգապահական հանձնաժողովին է ներկայացվել պատասխան, որով վերջինս հանձնաժողովին հայտնել է, որ իր կողմից սույն 2024թ.-ի սեպտեմբերի 16-ին, ժամը 11:00-ին ք. Երևան Չեխովի 23, բնակարան 68 հասցեում /նշված հասցեի նկուղում բացված իր գրասենյակում/ նշանակվել էր պարտապան՝ Գուրգեն Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող շարժական գույքի աճուրդի-վաճառք:Սակայն 16.09.2024թ. 11:00-ին նշանակված աճուրդ-վաճառքը չի կայացել տեխնիկական խնդիրների պատճառով, քանի որ աճուրդին ներկայացված է եղել թվով 2 հայտ, սակայն աճուրդի կայացման ժամին կառավարչի մոտ փաստացի առկա է եղել միայն թվով 1 հայտ: Ելնելով վերոգրյալից և ղեկավարելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի դրույթներով իր կողմից կազմվել է արձանագրություն, համաձայն որի 2024 թվականի սեպտեմբերի 16-ին ժամը 11:00-ին, ք Երևան Չեխովի 23, բնակարան 68 հասցեում նշանակված Գուրգեն Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող շարժական գույքի աճուրդ-վաճառք չի կայանալու տեխնիկական խնդիրների պատճառով և միևնույն ժամանակ հայտատուներին տեղեկացրել է, որ վերջիններիս կողմից սնանկության հատուկ հաշվին վճարված աճուրդի մասնակցության վճարը և նախավճարը կվերադարձվեն վերջիններիս:

Հատկանշական է այն հանգամանքը, որ 18.02.2025թ.-ի նշանակված նիստին, ներկայացել էին ինչպես դիմումատուն այնպես էլ սնանկության գործով կառավարիչը և նիստի ընթացքում դիմումատուն պնդեց իր կողմից ներկայացված դիմումը:Սակայն իր կողմից նշված հայտարարության մեջ, վերջինս հստակեցրեց այն հանգամանքը, որ հայտը ներկայացվել է իր կողմից մինչև հայտարարված աճուրդի նախորդ օրը, իսկ թիվ՝ ՍՆԴ/2388/04/23 սնանկության գործի ընթացքում հայտարարված աճուրդներին ներկայացված հայտերը, ենթակա էին ներկայացման ՀՀ արդարադատության նախարարի կողմից 16.03.2020թ.-ին հաստատված թիվ 116-ն հրամանով հաստատված կարգի համձայան, այն է՝ աճուրդից նախորդող հինգ օր առաջ:Նշված հանգամանքը նշվեց Ա.սարգսյանի կողմից դիմումատուին տրված հարցով:Բացի այդ հարկ է նշել նաև, որ կառավարիչը ավելացրեց, որ այն օրը երբ պետք է կայանար այդ աճուրդը, որին իր հայտներ ներկայացրել դիմումատուն, աճուրդի չի կայացել և այնուհետև նշանակվել է նոր աճուրդ, որում հաղթել է նոր հայտատու:

Լսելով նշված հանգամանքները, նիստի ընթացքում դիմումատուն հրաժարվեց իր կողմից ներկայացված դիմումից և լսումները համարվեցին ավարտված, իսկ այնուհետև կարգապահական հանձնաժողովների անդամներին առաջարկվեց հայտնել իրենց կարծիքները:

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը հայտնեց, որ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմումատուն հրաժարվել է իր դիմումատուից ուստի վերջինս կարծիք հայտնեց վարույթը կարճել:

Հանձնաժողովի անդամ՝ Լուսինե Սարգսյանը հայտնեց, որ եթե բողոք բարձրացնող անձը այս պահի դրությամբ գտնում է, որ չկա վեճ և վարքագծի կանոնի խախտում, ուստի վերջինս կարծիք հայտնեց վարույթը կարճելու վերաբերյալ.

Հանձնաժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը հայտնեց կարծիք, որ եթե իրոք դիմումատուն հրաժարվել է իր դիմումից, ուստի նման պայմաններում իրականում չկա վեճ և բողոք, ուստի կարծիք հայտնեց վարույթը կարճելու վերաբերյալ.

Հանձնաժողովի անդամ, նախագահ Արման Սարգսյանը հայտնեց, որ չնայած նրան, որ իրականում կարող էին դիմումատուի կողմից դիմումում ներկայացրած հանգամանքները իրոք

հանդիսանալ կառավարչի կողմից վարքագծի կանոնի խախտում, սակայն հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմումից ըստ էության դիմումատուն հրաժարվել է իր դիմումից, իսկ նման պայմաններում կարգապահական հանձնաժողովը չունի ըստ էության դիմում, ուստի նույնպես հայտնեց կարծիք, որ կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Նման պայմաններում հանձնաժողովը միաձայն որոշեց, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.4 հոդվածի հիմքով, սույն կարգապահական վարույթը կառճել, քանի որ ըստ էության, դիմումատուն հրաժարվել է իր դիմումից և նման պայմաններում դիմումատուի կողմից այլևս որևիցե մի պահանջ առկա չէ:

Կից ներկայացվում է կարգապահական վարույթին առընչվող փաստաթղթերը՝ 38 թերթից, ինչպես նաև նիստի ձայնագրության կրիչը:

Ա.Սարգսյան

Լ.Սարգսյան

Հ.Գևորգյան

Ա.Մովսիսյան